ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 45

12 մայիսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ, ՀՐԱՆՏ ՇԱՀԻՆՅԱՆ 96/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ <<ՍԻՄՈՆՅԱՆ>> ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 46-րդ և 48-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին</u>

<u>որոշում է</u>

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող քաղաք Մարալիկ, Հրանտ Շահինյան 96/5 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 123,7 քառակուսի մետր հողատարածքը (կադաստրային ծածկագիր 08-003-0026-0227) անհատույց, առանց մրցույթի 25 տարի ժամկետով <<Սիմոնյան>> կրթական հիմնադրամին <<Թումոն տուփի մեջ>> ծրագիրն իրականացնելու նպատակով, հատկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ -12 Դեմ՝-0 Ձեռնպահ՝-0

Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ա. ԱՐՍԵՆՅԱՆ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Գ.ՂՉՐՈՅԱՆ

Բ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

Ա. ՆԻԿՈՅԱՆ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թվականի մայիսի 12
Քաղաք Մարալիկ